**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«1992 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԿՐՈՐԴ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«1992 թվականի մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին» պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» երկրորդ արձանագրությունը ստորագրվել է 2018թ. նոյեմբերի 8-ին, Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից:

Արձանագրությունը ստորագրվել է Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Տաջիկստանի Հանրապետության կողմից:

Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ստորագրած պետությունների՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից:

2019թ. ապրիլի 11-ի դրությամբ Արձանագրությունը չի վավերացվել այն ստորագրած Կողմերի կողմից:

**ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ** **ԳՐԻԳՈՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**